ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/223

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարան
Մասնակից՝ «Լիլիթ-92» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լիլիթ-92» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Հայրապետյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնանշման հարցում, երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14228-2020 գրությամբ «Լիլիթ-92» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.09.2020թ. թիվ 91-588 գրության հիման վրա, 22.09.2020թ.-ին «Լիլիթ-92» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 22.09.2020թ.-ին:

22.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/223 համարի ծածկագիրը:

01.10.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին և 22.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2020թ.-ին:

2. ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանը 17.09.2020թ. թիվ 91-588 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ»-ի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքում հաղթող մասնակից է ճանաչվել միակ մակնակից՝ «Լիլիթ-92» ՍՊԸ-ն:

Պայմանագիր կնքելու նպատակով «Լիլիթ-92» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ստորագրված պայմանպգիրը, որակավորման ապահովումը (կնքվող պայմանագրի գնի չափով) բանկային երաշխիքի (հավելված 4) կամ կանխիկ փողի ձևով և պայմանագրի

ապահովումը (կնքվելիք պայմանագրի ընդհանուր արժեի 10 (տասը) տոկոսի չափով)՝ բանկային երաշխիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով, սակայն օրենքով սահմանված ժամկետում մասնակիցը չի ներկայացրել վերոնշյալ փաստաթղթերը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «Լիլիթ-92» ՍՊԸ-ն զրկվել է «ԳՀ- ԳՀԱՇՁԲ-20/13-1» ծածկագրով պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը «ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ»-ը «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած, ինչի մասին հայտարարությունը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկելու ծանուցումը ուղարկվել է նաև մասնակցի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, «Լիլիթ-92» ՍՊԸ-ի հայտը, գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և մասնակցին պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկելու ծանուցումը:

Խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի բ) մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լիլիթ-92» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Լիլիթ-92» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Լիլիթ-92» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14228-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում, Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«22.09.2020թ-ին էլեկարոեային փոստով տեղեկացել եմ այն մասին, որ Ձեր վարույթում քննվում է ՍՑ-ԼՕ-2020/223 ծածկագրով ընթացակարգը «Լիլիթ-92» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքով «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում (այսուհեա՝ «Ցուցակ») ներառելու վերաբերյալ:

Գտնում եմ, որ տվյալ դեպքում Ընկերությանը Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքով Ցուցակում ներառելու հիմքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ:

1. ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքապետարանի (այսուհետ «Պատվիրատու») կողմից ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների (այսուհետ «հիմնանորոգման աշխատանքներ») կատարման պայմանագիր կնքելու նպատակով հայտարարած գնանշման հարցման ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ «Ընթացակարգ») արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել Ընկերությունը: Ընտրվելուց հետո Ընկերությունը, հանգամանորեն ուսումնասիրելով շինարարական օբյեկտի փաստացի վիճակը և հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, հայտնաբերել է մի շարք հանգամանքներ, որոնք անհնարին են դարձրել աշխատանքների կատարումը: Մասնավորապես

1. հայտնաբերվել է անհամապատասխանություն հիմնանորոգման աշխատանքների նախագծով (այսուհետ «Նախագիծ») նախատեսված աշխատանքների և հիմնանորոգման համար օբյեկտիվորեն անհրաժեշտ շինարարական նորմերով ու կանոններով պահանջվող աշխատանքների (դրանց տեսակների, քանակների և ծավալների) միջև,

2. հայտնաբերվել է անհամապատասխանություն Նախագծով նախատեսված աշխատանքների և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների միջև,

3. նախագիծը լրամշակելու և հիմնանորոգման համար օբյեկտիվորեն անհրաժեշտ շինարարական նորմերով ու կանոններով պահանջվող աշխատանքներին համապատասխանեցնելու, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվը լրամշակված

նախագծին համապատասխանեցնելու դեպքում ի հայտ է եկել նախահաշվի տարբերություն, որը ավելի քան 15%-ով գերազանցում է Ընկերության գնային առաջարկը:

Հայտնաբերված անհամապատասխանությունների, թերությունների և ի հայտ եկած այլ խնդիրների մասին Ընկերությունն անմիջապես տեղեկացրել է Պատվիրատուին, երաժշտական դպրոցի տնօրենին և նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակած կազմակերպությանը: Նշված անձանց ներկայացուցիչների մասնակցությամբ ի հայտ եկած խնդիրների և դրանց հնարավոր լուծումների քննարկման ընթացքում Նախագիծը մշակած կազմակերպության ներկայացուցիչը ընդունել է դրանց գոյությունը, ինչպես նաև հայտնել է, որ առկա խնդիրների մասին վերջինս տեղյակ է, դրանք հիմք են հանդիսացել դեռևս մինչև Ընթացակարգ հայտարարելը հիմնանորոգման աշխատանքների լրամշակված նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու համար, որոնցում վերջինիս պնդմամբ բոլոր թերությունները վերացված են, իսկ լրամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը տրամադրվել են Պատվիրատուին, սակայն ինչ-ինչ պատճառներով Պատվիրատուն հրապարակել է սկզբնական նախագծանախահաշվային փաստաթղթերը: Մինչդեռ Պատվիրատուն պնդում է, որ Նախագիծը մշակած կազմակերպությունն առ այսօր լրամշակված նախագծանախահաշվային փաստաթղթեր չի կազմել և չի տրամադրել, ինչի պատճառով անգամ չի կարող հայտարարել նոր ընթացակարգ:

Նման պայմաններում Ընկերությունը որևէ մեղք չունի ստեղծված իրավիճակում, որովհետև ինքը գնային առաջարկը կատարելիս հիմք է ընդունում բացառապես Ընթացակարգի շրջանակներում հրապարակված և գնանշման հարցման հրավերում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը և դրանցում արտացոլված տվյալները: Ընդ որում, պետք է նշել, որ Ընթացակարգի շրջանակներում Նախագիծը չի հրապարակվել, ինչի հետևանքով Ընկերությունը հնարավորություն չի ունեցել անմիջականորեն ընկալելու, համեմատելու և հայտնաբերելու, օրինակ, Նախագծի և ծավալաթերթ-նախահաշվի միջև առկա անհամապատասխանությունները: Միևնույն ժամանակ, նման պայմաններում Պատվիրատուի հետ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») ստորագրելը չի բխում Ընկերության տնտեսական և ֆինանսական շահերից, որովհետև վերջինս ստիպված է լինելու իր հաշվին կատարել լրացուցիչ աշխատանքներ և հավելյալ ծախսեր, որոնք չեն հատուցվելու: Բացի այդ, առկա թերությունների պայմաններում հիմնանորոգման աշխատանքների կատարումը վտանգավոր է մարդկանց կյանքի և առողջության համար, ռիսկային է նրանց անվտանգության տեսանկյունից, ինչպես նաև անտրամաբանական է և աննպատակահարմար, որովհետև առկա նախագծանախահաշվային փաստաթղթերը

նախատեսում են գլխավորապես շենքի կամ դրա առանձին մասերի քանդման աշխատանքները, սակայն չեն նախատեսում քանդելուց հետո դրանց վերականգնման կամ վերառուցման աշխատանքները: Օրինակ, շենքի տանիքը քանդելու, սակայն չվերականգնելու արդյունքում շենքի ներսում կատարված աշխատանքները կարող են վնասվել անձրևաջրերից, որի դեպքում անիմաստ է դառնում շենքի ներսում աշխատանքների կատարումը, իսկ վերանորոգված ոչ սեյսմակայուն աստիճանը կարող է ցանկացած պահի փլուզվել շենքի ներսում գտնվող մարդկանց կյանքին կամ առողջությանը պատճառելով վնասներ, որոնց համար Պատվիրատուի հետ Պայմանագիրը կնքելու դեպքում պատասխանատվությունը (այդ թվում՝ քրեական) կրելու է Ընկերությունը:

Պետք է ընդգծել, որ գնանշման հարցման հրավերի 7[25]-րդ հավելվածի բովանդակությունը կազմող Պայմանագրի նախագծի 1.2 կետում ուղղակիորեն նշված է, որ՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան», իսկ նույն Պայմանագրի նախագծի 6.1 կետը սահմանում է, որ «Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի ... համար»: Տվյալ դեպքում Ընկերությունն իր կամքից անկախ, օբյեկտիվ պատճառներով չէր կարող ապահովել հիմնանորոգման աշխատանքների կատարումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին, և կանոններին, աշխատանքի նախագծին, աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան, ինչպես նաև չէր կարող ապահովել աշխատանքի պատշաճ որակը:

Թեև տվյալ դեպքում Պատվիրատուի և Ընկերության միջև Պայմանագիրը չի կնքվել և կողմերի միջև պարտավորական հարաբերություններ չեն ծագել, ինչը Ընկերությանը զրկում է պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվությունից ազատող իրավական նորմերը վկայակոչելու հնարավորությունից, այնուամենայնիվ, հարկ ենք համարում վկայակոչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածը, որի համաձայն՝ «1. Կապալառուն պարտավոր է պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվել են՝

1) պատվիրատուի տրամադրած նյութերի, սարքավորումների, նախագծային փաստաթղթերի կամ մշակման (վերամշակման) հանձնված գույքի ոչ պիտանի կամ անպատշաճ որակի լինելը.

2) աշխատանքների կատարման եղանակների մասին պատվիրատուի ցուցումների իրագործման հետ կապված՝ նրա համար հնարավոր անբարենպաստ հետևանքներ.

3) կապալառուից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են կատարվող աշխատանքի արդյունքի պիտանիությանը և ամրությանը կամ անհնար են դարձնում դրանք ժամանակին ավարտելը:

2. Կապալառուն, որը պատվիրատուին չի նախազգուշացրել սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների մասին կամ շարունակել է աշխատանքը՝ չսպասելով նախազգուշացման պատասխանի համար պայմանագրում նշված ժամկետի, իսկ դրա բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետի ավարտին կամ, չնայած աշխատանքները դադարեցնելու մասին պատվիրատուի ժամանակին տված ցուցումին, շարունակել է դրանք, իրավունք չունի իրեն կամ իր կողմից պատվիրատուին համապատասխան պահանջներ ներկայացնելիս վկայակոչել նշված հանգամանքները:

3. Եթե պատվիրատուն, չնայած սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների մասին կապալառուի կողմից ժամանակին հիմնավոր նախազգուշացմանը, ողջամիտ ժամկետում չի փոխել ոչ պիտանի և անորակ նյութը, սարքավորումը, նախագծային փաստաթղթերը կամ մշակման (վերամշակման) հանձնված գույքը, աշխատանքի կատարման եղանակների մասին ցուցումը կամ այլ անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել այն հանգամանքները վերացնելու համար, որոնք սպառնում են կատարվող աշխատանքի պիտանիությանը, կապալառուն իրավունք ունի հրաժարվել կապալի պայմանագիրը կատարելուց ու պահանջել հատուցելու դրա դադարման հետևանքով իրեն պատճառված վնասները:»:

Շարադրվածից հետևում է, որ ստեղծված իրավիճակում՝ Պայմանագիրը չստորագրելու հետ կապված, Ընկերությունը որևէ մեղք չունի: Ընկերությունը, մի կողմից, չի կարող պատասխանատվություն կրել այլ անձանց ոչ պատշաճ գործողությունների համար, մյուս կողմից, ոչ միայն պարտավոր էր նախազգուշացնել Պատվիրատուին հայտնաբերված թերությունների մասին, այլև Պայմանագիրը ստորագրելու դեպքում իրավունք ուներ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց: Նման պայմաններում իրավաչափ չէ Ընկերությանը Ցուցակում ներառելը Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքով, որի համաձայն՝ «6. ... Մասնակիցն ընդգրկվում է ... ցուցակում, եթե՝ ... բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց». որովհետև Ընկերությունը ոչ թե իր կամքով հրաժարվել է պայմանագիրը կնքելուց, այլ իր կամքից անկախ պատճառներով չէր կարող այն կնքել:

2. Ընկերությունը Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքով Ցուցակում չի կարող ներառվել նաև զուտ իրավական տեսանկյունից հետևյալ պատճառաբանությամբ:

Մատնանշված հանգամանքները հաշվի առնելով Ընկերությունն, այնուամենայնիվ, չի հրաժարվել Պայմանագիրը կնքելուց, այլ Պատվիրատուին առաջարկել է և խնդրել է Պայմանագրի կնքման ժամկետը երկարացնել մինչև ի հայտ եկած խնդիրների լուծումը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.09.2020թ. նիստում կայացված արձանագրային որոշմամբ Ընկերությանը զրկել է Պայմանագիրը ստորագրելու իրավունքից Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա, որի համաձայն «Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից», այնուհետև Պատվիրատուն իր 17.09.2020թ. №01-588 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքով Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի առկայությունը ստուգելու և հաշվառելու պահանջով:

Տվյալ դեպքում Պատվիրատուն ըստ էության հավասարության նշան է դրել Օրենքում օգտագործվող երկու եզրույթների Պայմանագիրը կնքելուց հրաժարվելու ն Պայմանագիրը ստորագրելու իրավունքից գրկելու միջև: Նշված եզրույթների բովանդակությունը թեև որոշակիորեն համընկնում է (հետևանքների առումով), սակայն չի նույնանում: Պայմանագիրը կնքելուց հրաժարվելը Ընկերության գիտակցված և կամային գործողություն է, որի իրականացումն ամբողջությամբ պայմանավորված է Ընկերության գիտակցությամբ, կամքով և կամահայտնությամբ, իսկ Պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկելը Ընկերության գիտակցությամբ և կամքով, առավել ևս կամահայտնությամբ պայմանավորված չէ, եթե, նույնիսկ, կապված է Ընկերության վարքագծի հետ, այն ամբողջությամբ պայմանավորված է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կամքով և գործողություններով:

Բացի այդ. կարծում ենք, որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը ենթադրում է, օրինակ, նույն Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կիրառում, որի համաձայն «2. Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա ՝ 1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից»: Ինչպես երևում է նշված իրավական նորմի բովանդակությունից, հայտի ապահովումը վճարելու ընտրված մասնակցի պարտականությունը ծագում է երկու տարբեր

հիմքերից պայմանագիր կնքելու իրավունքից հրաժարվելու և պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու (որը կարող է լինել նաև պայմանագիրը սպորագրելու իրավունքից զրկելու հետևանք): Տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուներ ընտրության հնարավորություն հրաժարվելու կամ զրկելու միջև և ընտրել է զրկելը, որն, ի տարբերություն հրաժարվելու, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմք չի հանդիսանում: հետևաբար, Ընկերությունը չի կարող այդ հիմքով ներառվել Ցուցակում, որի դեպքում անհասկանալի է, թե ինչու է Պատվիրատուն, արձանագրելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով չնախատեսված հիմք, դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը այդ հիմքով Ընկերությանը Ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:»:

Վերոգրյալի հիման վրա, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Լիլիթ-92» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում ներառելու մասին որոշում չկայացնել կամ կայացնել որոշում «Լիլիթ-92» ՍՊ ընկերությունը «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում չներառելու մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքի բացակայության պատճառով:

Ներկայացված լրացմամբ մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ուղարկու առաջին մրցույթով հայտարարված Գառնիի երաժշտական դպրոցի ծավալաթերթը, որը կազմում է 15906000 ՀՀ դրամ և ուղարկում եմ երկրորդ մրցույթով հայտարարված ամփոփ ծավալաթերթը, որը կազմում է 26874300 ՀՀ դրամ, միաժամանակ ուղարկում եմ այն աշխատանքները, որոնք չեն ներառվել առաջին մրցույթով հայտարարված ծավալաթերթի մեջ: Վերը նշված աշխատանքների ընդհանուր գումարը առանց ԱԱՀ-ի կազմում է 7836000 ՀՀ դրամ: Աշխատանքները որոնք որ ներառված են առաջին մրցույթի ծավալաթերթի մեջ հնարավոր չէր լիարժեք կատարել, առանց երկրորդ մրցույթի մեջ ընդգրկված աշխատանքների, քանի որ դրանք փոխկապակցված են:»:

4. <u>ՍՑ-LO-2020/223 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.08.2020թ.-ին հայտարարվել է «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լիլիթ-92» ՍՊԸ-ն:

ii. «Լիլիթ-92» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.08.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգի ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Լիլիթ-92» ՍՊԸ-ին:

iv. 01.09.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ անգործության ժամկետ չի սահմանվել:

v. 15.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Լիլիթ-92» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիր և չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, ինչի արդյունքում Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները որոշել է «Լիլիթ-92» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը (պայմանագիր չի կնքվում):

vii. www.gnumner.am համացանցային կայքի տեղեկատվության համաձայն՝ 30.09.2020թ.-ին և 12.10.2020թ.-ին հայտարարվել են ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի կարիքների համար Գառնի համայնքում գտնվող երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման համապատասխանաբար «ԳՀ–ԳՀԱՇՁԲ-20/19» և «ԳՀ–ԳՀԱՇՁԲ-20/21» ծածկագրերով գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14228-2020 գրությամբ «Լիլիթ-92» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին

ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի կողմից երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.08.2020թ.-ին հայտարարված «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լիլիթ-92» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 19.08.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է հաղթող մասնակից և

վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սակայն Հանձնաժողովի 15.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ, հանձնաժողովը հաշվի առնելով, որ «Լիլիթ-92» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիր և չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները և հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որոշել է վերջինիս զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործում առկա փաստերի՝ www.gnumner.am համացանցային կայքի տեղեկատվության համաձայն՝ 30.09.2020թ.-ին և 12.10.2020թ.-ին հայտարարվել են ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի կարիքների համար Գառնի համայնքում գտնվող երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման համապատասխանաբար «ԳՀ–ԳՀԱՇՁԲ-20/19» և «ԳՀ–ԳՀԱՇՁԲ-20/21» ծածկագրերով գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր:

Ուսումնասիրելով վերը նշված ծածկագրերով գնման ընթացակարգերի հրավերներում առկա ծավալաթեր-նախահաշիվները, դրանք համադրելով «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված ծավալաթեր-նախահաշվի հետ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ դրանք բոլորը թեև ուղղված են ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի կողմից երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերմանը, սակայն էապես տարբերվում են միմյանցից: Մասնավորապես՝ տարբերվում են հրավերներին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները, թիվ «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» գնման ընթացակարգի հրավերին կցված ծավալաթերթով կատարման ենթակա աշխատանքներից բացակայում են մյուս երկու ծածկագրերով հրավերներին կցված ծավալաթերթում առկա՝ 1-2 կետով շինարարական աշխատանքների 28-ից 45-րդ կետերով սահմանված կատարման ենթակա աշխատանքները, ինչպես նաև բացակայում է 1-6 կետով սահմանված ջեռուցման աշխատանքները:

Վերոգրյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, դրանք համադրելով գործում առկա փաստերին և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշմանը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Լիլիթ-92» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը նպաստել է «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված ծավալաթերթ-նախահաշվում առկա թերությունները:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ վերոնշյալները ապացուցվում են Պատվիրատուի կողմից 30.09.2020թ.-ին և 12.10.2020թ.-ին հայտարարված ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի կարիքների համար Գառնի համայնքում գտնվող Երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման համապատասխանաբար «ԳՀ–ԳՀԱՇՁԲ-20/19» և «ԳՀ–ԳՀԱՇՁԲ-20/21»

ծածկագրերով գնման ընթացակարգի հրավերներին կցված ծավալաթերթերի թիվ «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված ծավալաթերթ-նախահաշվում առկա կատարման ենթակա աշխատանքների տարբերությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն դեպքում «ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված և կցված ծավալաթերթով կատարման ենթակա աշխատանքները թերի և ոչ լիարժեք լինելու հանգամանքը հանգեցրել և նպաստել է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություն-ների չկատարմանը, որպիսի պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի

1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14228-2020 գրությամբ «Լիլիթ-92» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/223 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**